Շուշաննա Թևանյան

ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության փորձագետ

29.12.2022թ.

Եռամսյակային հաշվետվություն

(Հոկտեմբեր-դեկտեմբեր 2022թ")

Հաշվետվության հասցեատեր

Հաշվետվությունը կներկայացվի ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ Հայկ Մուրադյանին:

Հաշվետվության նպատակ

Այս հաշվետվությունը նպատակ ունի՝ հասցեատիրոջն ամփոփ և թափանցիկ կերպով ներկայացնելու իմ՝ որպես մոնիթորինգի և գնահատման փորձագետի կատարած աշխատանքի և ստացած արդյունքների մասին տեղեկատվությունը:

Հաշվետվության կառուցվածք

Փաստաթուղթը Աղյուսակ 1-ի տեսքով ներկայացնում է վերջին երեք ամսիների ընթացքում արված աշխատանքների հիմնական ուղղությունները, ձեռնարկված գործողություններն ու դրանց (ակնկալվող) արդյունքները:

Աղյուսակ 1

Հ/Հ	Ուղղություն	Գործողություն	Արդյունք/ակնկալվող արդյունք
1	**ԱՍՀՆ հաշվետու զեկույցի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմին**	**1.1.** Պատրաստել եմ հաշվետու զեկույցի սահիկաշարի համար անհրաժեշտ վարչական տվյալների հավաքագրման մատրիցաները" **1.2.** Պատրաստել եմ հաշվետու զեկույցի սահիկաշարը:	**1.1., 1.2.** ԱՍՀՆ Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչությունը ս.թ. դեկտեմբերի 15-ին սահիկաշարը ներկայացրել է վարչապետի աշխատակազմ, իսկ դեկտեմբերի 16-ին ԱՍՀՆ ղեկավար կազմը սահիկաշարը շնորհանդեսով

Scanned by TapScanner

		1.3. Աշխատել եմ վարչապետի աշխատակազմին ներկայացվելիք հաշվետու զեկույցի՝ սահիկաշարին կից փաթեթի վրա:	ներկայացրել է վարչապետին: **1.3.** Օր.՝ խմբագրվել է տարեցների խնամքի ծառայությունների հետազոտության սահիկաշարը, տրամադրվել է տեղեկատվություն Աշխատանքի և սոցիալական պաշտպանության 2023-2026թթ ռազմավարության ընթացքի վերաբերյալ և այլն:
2	**ՄԳ համակարգի ներդնում**	**2"1"** «Data for Impact» ծրագրի հայաստանյան ներկայացուցչի հետ պայմանավորվածության արդյունքում առցանց հանդիպում-քննարկում եմ համակազմակերպել՝ «Data for Impact» ծրագրի մոլդովական գրասենյակի ներկայացուցիչ Կամիլլա Գիորգեի հետ, ով սերտորեն համագործակցում է Մոլդովայի աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարության հետ՝ իրենց ՄԳ համակարգի ներդրման ուղղությամբ: **2.2.** Եվրոպայի սոցիալական բարեկեցության քաղաքականության և հետազոտության կենտրոնի հետ կայացված պայմանավորվածության արդյունքում ԱՍՀՆ հյուրընկալմամբ համակազմակերպել եմ	**2.1.** ԱՍՀՆ աշխատողները ծանոթացել են Մոլդովայի նախարարության ընդհանուր ՄԳ ճարտարապետությանն ու ՄԳ համակարգի ներդրման դժվարություններին ու քաղված դասերին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել երկխոսությունը՝ հաջորդ անգամ արդեն մոլդովական նախարարության համապատասխան ստորաբաժանման ներկայացուցիչների մասնակցությամբ: **2.2.** ԱՍՀՆ օժանդակ, այնպես էլ հիմնական վարչությունների աշխատողները ծանոթացել են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Միացյալ Թագավորության, Շվեյցարիայի, Շվեդիայի, Ուկրաինայի և Հս.

Scanned by TapScanner

		առցանց «Policy Review» կոնֆերանս՝ «Սոցիալական պաշտպանության ծրագրերի մոնիթորինգ և գնահատում» թեմայով: ԱՍՀՆ կողմից հանդես եմ եկել որպես խոսնակ՝ ներկայացնելով նախարարության ՄԳ ճարտարապետությունն ու ՄԳ համակարգի ներդրման առանձնահատկությունները:	Մակեդոնիայի համապատասխան գերատեսչությունների ՄԳ ճարտարապետությանը, ՄԳ անձնակազմի առանձնահատկություններին տվյալների հավաքագրման և վերլուծության համար օգտագործվող մեթոդներին և այլն՝ մասնավորապես զբաղվածության, երեխաների պաշտպանության և ընտանիքին ուղղված աջակցության ծրագրերի համատեքստերում: 2023թ. հունվար ամսվա ընթացքում կազմակերպչական թիմը ամփոփիչ հաշվետվություն է ներկայացնելու՝ կոնֆերանսի բոլոր խոսնակների սահիկաշարերով, վերլուծական նյութերով և ՄԳ-ին առնչվող օգտակար նյութերով:
		2.3. Զբաղվածության, երեխաների պաշտպանության, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառներում պետական վիճակագրության բարեկավման նպատակով պայմանավորվածություն եմ ձեռք բերել Վիճակագրական	**2.3.** Աշխատանքային խմբի անդամների նախնական ցանկը պատրաստ է: Մոտ ժամանակներս խմբի ձևավորման նպատակով նախարարի հրամանի նախագիծ պետք է ներկայացվի հաստատման:

Scanned by TapScanner

		կոմիտեի հետ՝ աշխատանքային խումբ ձևավորելու համար:	
3	**Այլ գերատեսչությունների կողմից ներկայացված ռազմավարություններ**	**3.1.** Խմբագրել եմ «Պարենային անվտանգության համակարգի» ռազմավարության տեքստն և գործողությունների ծրագիրը:	**3.1.** Ներկայացված լայնածավալ դիտարկումների մոտ 80%-ն ընդունվել է փաստաթղթի հեղինակի՝ Էկոնոմիկայի նախարարության կողմից:
		3.2. Կարծիք եմ ներկայացրել «Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության ռազմավարության նախագծի վերաբերյալ:	**3.2.** Բովանդակային և կառուցվածքային դիտարկումներ են ներկայացվել փաստաթղթի վերաբերյալ՝ ձգտելով հետևել ՀՀ վարչապետի N 1508 – Լ որոշման «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ» հավելվածի պահանջներին:
		3.3. Կարծիք եմ ներկայացրել «Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարության նախագծի վերաբերյալ:	**3.3.** Բովանդակային և կառուցվածքային դիտարկումներ են ներկայացվել փաստաթղթի վերաբերյալ՝ ձգտելով հետևել ՀՀ վարչապետի N 1508 – Լ որոշման «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ» հավելվածի պահանջներին:

Scanned by TapScanner

4	**Զբաղվածության ամենամյա ծրագրի և երկու պիլոտային ծրագրերի մոնիթորինգ և գնահատում**	**4"1.** «Գործազուրկների զբաղվածության ապահովման» և «Ադրբեջանի կողմից 2016 և 2020թթ սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած գործազուրկ անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման և զբաղվածության ապահովման» պիլոտային ծրագրերի՝ ՄՍԾ կողմից իրականացվելիք ընթացիկ մոնիթորինգի նպատակով մշակել եմ մոնիթորինգի կարգ և ցուցանիշների շրջանակ՝ հենվելով առկա ՄԳ կարգի և մեթոդաբանության, ինչպես նաև միջազգային փորձի վրա: **4.2.** Կարծիք եմ ներկայացրել զբաղվածության ամենամյա ծրագրի՝ Ազգային ինստիտուտի կողմից մշակված տրամաբանական շրջանակի և ՄԳ անձնագրի վերաբերյալ" մասնակցել եմ այս ուղղությամբ Ազգային ինստիտուտի, ԱՍՀՆ Աշխատանքի և զբաղվածությաթյան վարչության և ՄՍԾ զբաղվածության բաժնի հետ քննարկումներին:	**4.1.** Պատճառաբանությամբ, որ մշակված փաստաթղթերը բարդ են՝ ՄՍԾ կարողությունների տեսանկյունից, դրանք փոխանցվել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտին (այսուհետ՝ Ազգային Ինստիտուտ)՝ պարզեցման և վերջնական տարբերակի ներկայացման նպատակով: **4.2**. Ներկայացված դիտարկումների մի մասն ընդունվել է Ազգային ինստիտուտի կողմից և ներառվել փաստաթղթերի վերջնական տարբերակում:
5	**ԱՄՆ ՄԶԳ-ի «ԿԴԻՀ երեխաների խնդիրներով զբաղվող եվ սոցիալական ծառայություններ մատուցող աշխատուժի կարողությունների գնահատում»**	**5.** Խմբագրել եմ Ազգային առաջնորդության խմբի կողմից ներկայացված վարչական տվյալների հավաքագրման մատրիցան:	**5.** Մատրիցան պաշտոնական գրությամբ ուղարկվել է ԱՍՀՆ՝ տվյալների հավաքագրման և տրամադրման համար: Գրության պատասխանը պատրաստվում է:

Scanned by TapScanner

	հետազոտություն		
6	**Համաշխարհային բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակների կողմից իրականացվող սոցիալական պաշտպանության ծրագրերի ծախսարդյունավետության գնահատում**	**6.** Այս հետազոտության շրջանակներում նշանակվել եմ ԱՍՀՆ-ի կողմից ՀԲ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ կոնտակտային անձ"մշակել եմ ծախսարդյունավետության հետազոտության համար ԱՍՀՆ-ից պահանջվող վարչական տվյալների հավաքագրման մատրիցաները՝ ներկայացնելով համապատասխան վարչությունների:	**6.** Մատրիցաներով տվյալների հավաքագրումը մեկնարկել է: Լրացված մատրիցաները հունվարին կփոխանցվեն ՀԲ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործընկերներին:
7	**0-18 տարեկան երեխաներին ուղղված Ազգային տրանսֆերտների հաշվարկ**	**7.** Ազգային տրանսֆերտների հաշվարկի քանակական ցուցանիշների համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման նպատակով՝ որպես Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության փորձագետ՝ համագործակցել եմ «Data for Impact» ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ:	**7.** Կազմվել են քանակական ցուցանիշների տվյալների մատրիցաները, որոնք հունվարին կքննարկվեն և կուղարկվեն համապատասխան գերատեսչություններին:

Ստորագրող՝ **Շուշաննա Թևանյան**

29.12.22թ.

Scanned by TapScanner